

## Մէջբերում՝

Յօդուածագիր՝ Նուարդ Մատոյեան-Տարագեան

# Ո՞վ Պիտի Կասեցնէ Համատարած Նահանջը Լեզուի Նահանջը Հայ Հոգիի Նահանջը

«Կը նահանջէ լեզուն, կը նահանջեն լեզուն եւ հոգին», տասնամեակներ առաջ տագնապահար ու յուսակտուր, կ'աղաղակէր Շահան Շահնուր:

Այս աղաղակը տարիներ շարունակ չդադրեցաւ, դարձաւ սթափեցնող ահագանգ, զգաստացնող հրամայական կանչ, որպէսզի հայութիւնը զգուշանայ իր ինքնութեան սպառնացող վտանգէն:

Եւ այսօր, այս ահագանգը կը հնչէ ամէնուրեք, ե՛ւ Սփիւռքի ե՛ւ Հայաստանի տարածքին, ուր հայը կու՛յ կ'երթայ համագայիւն նոր ողբերգութեան մը, որ կը կոչուի այլասերում:

Միքէ՞ այն ազգը չենք, որ դարեր շարունակ լոյս ըմպեց Մեսրոպաշունչ տառերէն, առջնորդութեամբ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հաննարոյ» կարգախօսով: Այն կարգախօսը, որ իրեն համար դարձաւ ուղեցիկ, կերտելու համար իր դարաւոր մշակոյթը, պահելու ու պահպանելու համար իր ոսկեղնիկ հայերէնը:

Բայց կարծես այս բախտորոշ կարգախօսը մեր օրերուն լոկ սահմանուած մնաց բեմերուն նակատը զարդարելու համար:

Որովհետեւ՝ ուծացում կոչուած աղէտը, թոյլ չտուաւ ըմբռնելու այս խօսքերուն իսկական իմաստը, որպէսզի հայոց լեզուի սէրը ներթափանցէր հայ հոգիներէն ներս:

Այսօր, կեանքի հոլովոյթին հետ, փոխուած է մարդոց մտածելակերպը եւ մարդոց վերաբերմունքը մեր ազգային անդրադարձներուն նկատմամբ: Դժուար չէ նկատել, թէ օր ըստ օրէ անելի կը սուզուինք օտարամոլութեան նահիւնին մէջ: Իսկ ամենացաւալին այն է, որ հետզհետէ մեր մէջ անելի կը խորանայ յուսահատեցնող այն զգացումը, թէ ինչքան ալ գրեմք ու խօսիմք այս երեւոյթներուն մասին, հաւատամքով ու ազգային ոգիով, ոչինչ կը փոխէ իրականութենէն, եւ ոչ մէկ ընդունելութիւն կը գտնէ մեր միջակայաշտ հասարակութեան կողմէ, որովհետեւ մարդիկ անտարբեր են հայ իրականութենէն ներս սողոսկող նոր եղեռնի հանդէպ:

Մենք, այլասերման եզրին կանգնած, կը մոռնանք թէ՛ սերունդներուն ազգային նկարագիր, հոգեբանութիւն ու մտածողութիւն ներարկողը հայոց լեզուն է:

Ո՞վ պիտի կասեցնէ հայոց լեզուի համատարած նահանջը:

Ան, որ մտահոգ է հայոց լեզուի ապագայով: Ան, որ կը հաւատայ, թէ հայոց այբուբենը իր հաւատամքն է: Մէկ խօսքով, մենք բոլորս միասնաբար պէտք է պաշտպանենք մեր լեզուն, մեր ազգային ինքնութիւնը բնորոշող Մեսրոպաշունչ հայերէնը, այդ մեր իրաւունքն է, մեր կեանքի բուն խորհուրդը եւ նպատակը: